նուանի. զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. ամէն։... Յիշեսջիք զհայրն իմ զԱլթունն, և զմայրն իմ զԱննան, և զԳրիգոր որդեակն իմ, որ ետ յօգնութիւն գրոյս ութ դահեկան կարմիր։ Եւ եղաք զսա յիշատակ եկեղեցւոյս՝ որ յանուն Ս. Աստուածածնին կառուցեալ է ի քաղաքս Զամոսցա. և այլ չունի ոք իշխանութիւն առնուլ զսա աստի։ [կայսեր. գրատուռն Վիեննայ]։

1617-8.

Ի թվին ՌԿԶ, գրեցի այս ի խուցն աղայներուն, ի քաղաքն Իլով, հոկտ. Լ. սուտանուն ԲՌ. Ի. ԵՌ. ԱՌ. իս (Սարգիս) զգործ?։ Երես անկեալ կ'ազաչեմ զդատ վարողդ՝ որ անմեղագիր լինիք գրիս, զի ծերացեալ անձամբ ԻԵ. ամեայ (?) գոլով՝ ձեռնարկեցի ի սմա, Աստուծոյ ողորմութեամբն յաւարտ ածի, և փափագ սրտիս կատարեցի և զիղձս իմ լցուցի. հառաչմամբ սրտիւ կ'աղաչեմ զընթերցողդ՝ որ աննախանձ զԱստուածողորմին չի խընայէք. և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալուստն. ամէն։ Ես մեղաւորս Քոտեցի սուտանուն Սարգիս։

Ո՛վ եղբայր Քոթահեացի տէրացու Սարգիս, երբ օգտիս ի սմանէ՝ զիս զյոգնամեղ Սար Սերաստացիս յիշեա միով Հայր մեղայիւ։

Գրեցաւ գիրս ի քաղաքն ի Լով, թվին ՌԿԶ, ան տարին մեղաւորս ի Լով ժամկոց էի, սուտանուն Սարգիս, որ է Քութեցի, որդի Յովանէսի. ամէն։ — Ո՛վ եղբարք, մի՛ մեղադրէք, մոլորեցայ այս ատենին. թէ ինչ պաջարի (պատճառի) կ'ասէք. նայ մէկ աղեկուկ մի տեսայ, որ եկօ ի քովս նստօ, զրուց երետ. թվին ՌԿԶ. դեկտեմբերի Զ, օրն շաբաթ. Թ. ժամուն, մէկ մասին. ամէն։

Ո՛վ ժամակոչ շոլոր մոլոր,
Էր կու հայիս դու նենգաւոր.
Յաշխարս սուտ է ւանցաւոր,
Մի՛ լինիր խէֆ անմըտաւոր։

Երբ որ տեսնուս դու շատ աղվոր,
Աչվիդ փակէ, նայէ ըստոր.
Տուր գոհութիւն սըրտովդ բոլոր,
Այնմ որ ըստեղծ զաշխարհս ոլոր։ [1]

[Ցումարաց գիրք]։

1617.

Ի գալն (ի) Ֆռանկաց հանդիպեցայ ի քաղաքն Իլով՝ որ կոչի Լեհ, ըստացայ զիրքս այս (Ամիրտոլվաթ) ի Ղազար վարդապետէ, ես մեղաւոր Երդամս, որ է Բառդիրք հաքիմարան, Հայոց բառոնն, Արաբացոց, Թուրքաց, Պարսից, Հոռմոց, սակաւ ինչ Ֆռանկաց. ստացայ վասն հոգոյ իմոյ ի հալալ ընչից իմոց. բերի յերկիրս Հայաստան... Աղաչեմ յիշել զմեղաւոր Եր-

1 Ոտանաւոր խրատս՝ ոչ Սարգսի է, այլ կամ Ասարայ կամ անոր՝ որ ուրիշ տեղ մ'այլ գրած է այսպէս. « Եւ յիշեա զգծող գրիս զմեղապարտ Սրապ Բաբերթցի, միով Հայր մեղայիւ »։